Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 2744 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 17-ն ընկած ժամանակահատվածում ընդունված N 932-Ա-ից N 974-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1.N 938-Ա որոշման նախաբանում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին թերի է գրառված։

2.N943-Ա և N 944-Ա որոշմումների նախաբաններում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին թերի է գրառված, բացի այդ թերի է գրառված նաև «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հղումը, իսկ որոշման առաջին կետը չի համապատասխանում որոշման վերնագրին։

3.N 948-Ա որոշման նախաբանում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին թերի է գրառված, բացի այդ թերի է գրառված նաև «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները։

4.N 949-Ա որոշման նախաբանում «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը թերի է գրառված։

5. N 958-Ա որոշման երկրորդ կետը ավելորդ է։

6. N 968-Ա որոշման վերջին տողում «Արթիկ համայնք» բառերը ավելորդ են։

7. N971-Ա որոշման նախաբանում հղումը ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմանը թերի է կատարված։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան